# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## N ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ԱՎ-23/1

ք. Երևան «11» օգոստոսի 2023 թ.

**ՀՀ քննչական կոմիտեն**, ի դեմս **գլխավոր քարտուղար Կ. Մարգարյանի**, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Կարկոմավտո» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Վ. Ղուկասյանի**, որը գործում է **«Կարկոմավտո» ՍՊԸ-ի** կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **երաշխիքի մեջ գտնվող ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **առավելագույնը 864 000 (ութ հարյուր վաթսունչորս հազար) ՀՀ դրամ**, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

**4.3 Ավտոմեքենաների, սարքերի և սարքավորումների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝**

**ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.**

**ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.**

**ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.**

**Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.**

**Ք-ն մատուցված ծառայության քանակն է:**

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկիառկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար

ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **ՀՀ քննչական կոմիտե** | **«Կարկոմավտո» ՍՊԸ** |
| **ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5** | **ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 47** |
| **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,** | **«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան » ՓԲԸ** |
| **Հ/Հ 900011000834** | **Հ/Հ 217001094077001** |
| **ՀՎՀՀ 02631263** | **ՀՎՀՀ 00059627** |
| **Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան** | **էլ. հասցեն՝ uaz@autogroup.am** |
| | **հեռ. 010 380604** |
| | **Տնօրեն՝ Վ. Պողոսյան** |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1
« 11 » 08 2023 թ. կնքված
ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ԱԿ-23/1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման | |
| | | | | | | հասցեն | ժամկետը** |
| 1 | 50111130/2 | Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ Ըստ հավելված 1-ի | դրամ | առավելագույնը 864 000 | 1 | ՀՀ, ք. Երևան, Մազմանյան 1 | *Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից սկսած մինչև 2023թ.-ի դեկտեմբերի 25* |

**Հավելված 1**

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

| Անվանումը | Տեխնիկական բնութագիրը և այլ պահանջները |
|---|---|
| Ավտոմեքենայի վերանորոգման ծառայություն | «Կարկոմավտո» ՍՊԸ-ից 2023թ.-ի ընթացքում ձեռքբերված 12 միավոր <<ՈՒԱԶ Պատրիոտ 3163>> մակնիշի ամենագնաց մեքենաների երաշխիքային սպասարկման ծառայություն |

***Երաշխիքի մեջ գտնվող մեքենաների պարտադիր սպասարկման ծառայություններ, վառելիքաքսուքային նյութեր և պահեստամասեր, ըստ մեքենայի անցած վազքի****՝

| Հ/Հ | Ծառայությունների անվանումները | Միավորի գին /ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ/ | Քանակ | Ընդհանուր /ՀՀ դրամ/ | Հաճախականություն կմ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Շարժիչի յուղ 10W-40 | 3 900 | 7 լիտր | 27 300 | 7 500 |
| 2 | Յուղի զտիչ | 5 100 | 1 հատ | 5 100 | |
| 3 | Ծառայություն | 9 000 | 0.4 ժամ | 3 600 | |
| **Ընդհանուր** | | | | **36 000** | |
| 4 | Շարժիչի յուղ 10W-40 | 3 900 | 7 լիտր | 27 300 | 15 000 |
| 5 | Յուղի զտիչ | 5 100 | 1 հատ | 5 100 | |
| 6 | Ծառայություն | 9 000 | 0.4 ժամ | 3 600 | |
| **Ընդհանուր** | | | | **36 000** | |

**Այլ ծառայություններ, ըստ անհրաժեշտության***

| ՀՀ | Ծառայությունների անվանում | Չ/մ | ՈՒԱԶ - իր բոլոր մոդիֆիկացիաներով, ներառյալ ԱԱՀ |
|---|---|---|---|
| 1 | Համակարգչային ախտորոշում | հատ | 4400 |
| 2 | Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | հատ | 8800 |
| 3 | Տարբեր ագրեգատների յուղերի որակի և մակարդակների ստուգում | հատ | 1500 |

| | | | |
|---|---|---|---|
| 4 | **1.Շարժիչ** | | |
| 5 | Շարժիչի հանում և տեղադրում | հատ | 43500 |
| 6 | Շարժիչի վերանորոգում | հատ | 260500 |
| 7 | Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում | հատ | 7000 |
| 8 | Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում | հատ | 13500 |
| 9 | Բ/լիսեռի հանում և տեղադրում | հատ | 27000 |
| 10 | Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում | հատ | 54000 |
| 11 | Շարժիչի գլխիկի միջադիրի փոխարինում | հատ | 54000 |
| 12 | Շարժիչի գլխիկի հղկում | հատ | 13100 |
| 13 | Փականի խցուկի փոխարինում | հատ | 54000 |
| 14 | Կափույրի բնիկի նորոգում | հատ | 7500 |
| 15 | Կափույրի ուղղորդիչ վռանի փոխարինում | հատ | 4800 |
| 16 | Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում | հատ | 8000 |
| 17 | Շարժիչի առջևի կափարիչի հանում և տեղադրում | հատ | 72900 |
| 18 | Ատամնավոր փոկի փոխարինում | հատ | 12000 |
| 19 | Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | հատ | 9500 |
| 20 | Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | հատ | 44550 |
| 21 | Ծնկաձև լիսեռի հղկում | հատ | 12150 |
| 22 | Մխոցային օղակների փոխարինում | լրակազմ | 94500 |
| 23 | Կարտերի հանում և տեղադրում | հատ | 20250 |
| 24 | Քիմիական լվացում 1 կտորի համար | հատ | 7800 |
| 25 | Կալեկտորի հանում և տեղադրում | հատ | 20250 |
| 26 | Շարժիչի բլոկի հղկում | հատ | 12150 |
| 27 | Շարժիչի բլոկի գլանի տեղադրում | հատ | 12150 |
| 28 | Շարժիչի շղթայի փոխարինում | հատ | 72500 |
| 29 | **2.Ղեկավարման, սնման և յուղման համակարգ** | | |
| 30 | Յուղի և յուղի զտիչի փոխարինում | հատ | 3600 |
| 31 | Ավտոմեքենայի հանգույցների յուղում | հատ | 2700 |
| 32 | Յուղի պոմպի փոխարինում | հատ | 20250 |
| 33 | Ղեկավարման բլոկի վերանորոգում | հատ | 40500 |
| 34 | Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում | հատ | 2700 |
| 35 | խառնարակի հանում և տեղադրում | հատ | 4050 |
| 36 | Խառնարակի վերանորոգում | հատ | 10800 |
| 37 | Օդի զտիչի փոխարինում | հատ | 2700 |
| 38 | Օդորակիչի զտիչի փոխարինում | հատ | 4050 |
| 39 | Ինժեկտորի ֆորսունկաների հանում և տեղադրում | լրակազմ | 12150 |
| 40 | Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | լրակազմ | 12150 |
| 41 | Բենզամղիչի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 42 | Վառելիքի զտիչի փոխարինում | հատ | 2700 |
| 43 | Վառելանյութի փողրակի հանում և տեղադրում | հատ | 2700 |
| 44 | Վառելիքի բաքի հանում և տեղադրում | հատ | 10000 |
| 45 | Ակսելերատորի հանում և տեղադրում | հատ | 5400 |
| 46 | Ակսելերատորի մաքրում | հատ | 3400 |
| 47 | Ակսելերատորի ոտնակի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 48 | Տրամվյորի հանում և տեղադրում | հատ | 4050 |
| 49 | **3. Հովացման և արտածման համակարգ** | | |
| 50 | Փոկի հանում և տեղադրում | հատ | 9500 |
| 51 | Հովհարի հանում և տեղադրում | հատ | 10800 |
| 52 | Ռադիատորի հանում և տեղադրում | հատ | 10800 |

| | | | |
|---|---|---|---|
| 53 | Ռադիատորի վերանորոգում | հատ | 8100 |
| 54 | Վառարանի ռադիատորի հանում և տեղադրում | հատ | 81000 |
| 55 | Թերմոստատի փոխարինում | հատ | 6750 |
| 56 | Ջրի պոմպի փոխարինում | հատ | 10800 |
| 57 | Ընդարձակող բաքի փոխարինում | հատ | 2025 |
| 58 | Խլարարի հանում և տեղադրում | հատ | 4050 |
| 59 | Խլարարի ներդիրի հանում և տեղադրում | հատ | 4050 |
| 60 | Հովացման համակարգի փողրակի հանում և տեղադրում | հատ | 2700 |
| 61 | Վառարանի շարժիչի հանում և տեղադրում | հատ | 27000 |
| 62 | Վառարանի ծորակի հանում և տեղադրում | հատ | 27000 |
| 63 | Հովացման հեղուկի փոխարինում | հատ | 3400 |
| 64 | **4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ** | | |
| 65 | Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում | հատ | 6050 |
| 66 | Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | լրակազմ | 40500 |
| 67 | Կցորդման ոտնակի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 68 | Կցորդման փողրակի փոխարինում | հատ | 2700 |
| 69 | Կցորդման երկժանիի փոխարինում | հատ | 2700 |
| 70 | Կցորդման կարգավորում | հատ | 1400 |
| 71 | ՓՏ-ի հանում և տեղադրում | հատ | 42500 |
| 72 | ՓՏ-ի վերանորոգում | հատ | 42500 |
| 73 | ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում | հատ | 42500 |
| 74 | Վազքաչափի շարժաբերի փոխարինում | հատ | 5400 |
| 75 | **5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ** | | |
| 76 | Բաշխիչ տուփի հանում և տեղադրում | հատ | 42500 |
| 77 | Բաշխիչ տուփի վերանորոգում | հատ | 42500 |
| 78 | Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում | հատ | 6750 |
| 79 | Բաշխիչ տուփի հաղորդակի էլ. շարժիչի փոխարինում | հատ | 2000 |
| 80 | Կարդանային լիսեռի հանում և տեղադրում | հատ | 3400 |
| 81 | Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում | հատ | 4100 |
| 82 | Էլաստիկ մուֆտի հանում և տեղադրում | հատ | 6000 |
| 83 | Միջանկյալ կարդանային լիսեռի հանում և տեղադրում | հատ | 6000 |
| 84 | **6. Առջևի և հետևի կամրջակներ** | | |
| 85 | Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում | հատ | 40500 |
| 86 | Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում | հատ | 60750 |
| 87 | Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում | հատ | 33750 |
| 88 | Տանող ատամնանիվի խցուկի փոխարինում | հատ | 4050 |
| 89 | Առջևի կամ հետևի կամրջ. կիսասռնու հանում և տեղադրում | հատ | 20250 |
| 90 | Կիսասռնու առանցքակալի փոխարինում | հատ | 5000 |
| 91 | Կիսասռնու խցուկի փոխարինում | հատ | 5000 |
| 92 | **7. Կախոց** | | |
| 93 | Տրավերսի հանում և տեղադրում | հատ | 7000 |
| 94 | Ձախ կամ աջ հոդակապի հանում և տեղադրում | հատ | 20250 |

| | | | |
|---|---|---|---|
| 95 | Անվակունդի հանում և տեղադրում | հատ | 7400 |
| 96 | Անվակունդի առանցքակալի փոխարինում | հատ | 1000 |
| 97 | Անվակունդի բացակի կարգավորում | հատ | 2700 |
| 98 | Ձախ կամ աջ հոդակապի խցուկների փոխարինում | հատ | 20250 |
| 99 | Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | հատ | 6440 |
| 100 | Զսպանակի հանում և տեղադրում | հատ | 3400 |
| 101 | Զսպակի հանում և տեղադրում | հատ | 8100 |
| 102 | Զսպակի վռանների փոխարինում | հատ | 1500 |
| 103 | Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | հատ | 2025 |
| 104 | Ցնցամեղմիչի լիցքավորում | հատ | 5400 |
| 105 | Ներքևի լծակի հանում և տեղադրում | հատ | 5440 |
| 106 | Ներքևի լծակի վռանների փոխարինում | հատ | 5440 |
| 107 | Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում | հատ | 2700 |
| 108 | Միջին ձգանի հանում և տեղադրում | հատ | 2700 |
| 109 | Ճոճանակային լծակի հանում և տեղադրում | հատ | 10000 |
| 110 | Վերևի լծակի հանում և տեղադրում | հատ | 10000 |
| 111 | Վերևի լծակի վռանների փոխարինում | հատ | 12000 |
| 112 | Գնդե հոդակապերի փոխարինում | հատ | 5000 |
| 113 | Ծայրակաների հանում և տեղադրում | հատ | 2700 |
| 114 | Առջևի կայունարարի վռանների փոխարինում | լրակազմ | 5400 |
| 115 | Հետևի կայունարարի վռանների փոխարինում | լրակազմ | 5400 |
| 116 | Հետևի զսպանակի փոխարինում | հատ | 6750 |
| 117 | Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում | հատ | 3000 |
| 118 | Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 119 | Առջևի կամ հետևի մետաղաձողի (շտանգա) վռանի փոխարինում | հատ | 2000 |
| 120 | Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում | հատ | 3200 |
| 121 | Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում | հատ | 3200 |
| 122 | Անկյունագծային լծակի վռանների փոխարինում | լրակազմ | 4000 |
| 123 | Շկվորնու հանում և տեղադրում | հատ | 23700 |
| 124 | Շկվորնու կարգավորում | հատ | 2100 |
| 125 | Շրջադարձի բռունցքի հանում և տեղադրում | հատ | 8100 |
| 126 | Անվաբացքի կարագավորում | հատ | 8100 |
| 127 | **8. Ղեկային մեխանիզմ** | | |
| 128 | Ղեկային կալունի հանում և տեղադրում | հատ | 15500 |
| 129 | Ղեկային կալունի վերանորոգում | հատ | 44500 |
| 130 | Ղեկային ձողի հանում և տեղադրում | հատ | 6800 |
| 131 | Ղեկային ձողի նորոգում | հատ | 4100 |
| 132 | Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում | հատ | 6800 |
| 133 | Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում | հատ | 2700 |
| 134 | **9. Արգելակային համակարգ** | | |
| 135 | Գլխ. գլանի հանում և տեղադրում | հատ | 6500 |
| 136 | Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 137 | Բանվ. գլանի հանում և տեղադրում | հատ | 4100 |
| 138 | Արգելակային համակարգի օդահանում | հատ | 2100 |
| 139 | Առջևի սուպպորտի հանում և տեղադրում | հատ | 6900 |
| 140 | Առջևի սուպպորտի վերանորոգում | հատ | 6750 |

| | | | |
|---|---|---|---|
| 141 | Արգելակային փողրակի փոխարինում | հատ | 2700 |
| 142 | Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | հատ | 8100 |
| 143 | Հետևի արգելակային կոճղակների փոխարինում | հատ | 10100 |
| 144 | Առջևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 145 | Հետևի արգելակային սկավառակի կամ թմբուկի հանում և տեղադրում | հատ | 6000 |
| 146 | Արգելակային սկավառակի հղկում | հատ | 8750 |
| 147 | Արգելակային թմբուկի հղկում | հատ | 6400 |
| 148 | Արգելակային սեղմակի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 149 | Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 150 | Ձեռքի արգելակի կարգավորում | հատ | 3800 |
| 151 | **10. Էլեկտրասարքավորում** | | |
| 152 | Էլեկտրասարքավորման վերանորոգում | ժամ | 10800 |
| 153 | Չափիչ սարքերի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 154 | Գեներատորի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 155 | Գեներատորի վերանորոգում | հատ | 6750 |
| 156 | Մեկնարկիչի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 157 | Մեկնարկիչի վերանորոգում | հատ | 6750 |
| 158 | Առջևի լապտերի հանում և տեղադրում | հատ | 2700 |
| 159 | Հետևի լապտերի հանում և տեղադրում | հատ | 2700 |
| 160 | Լապտերի լամպի փոխարինում | հատ | 2100 |
| 161 | Բռնկման կողպեքի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 162 | Վազքաչափի հանում և տեղադրում | հատ | 4800 |
| 163 | Սարքերի պանելի հանում և տեղադրում | հատ | 81000 |
| 164 | Ազդանշանի հանում և տեղադրում | հատ | 4000 |
| 165 | Ապակելվացիչի շարժիչի հանում և տեղադրում | հատ | 8100 |
| 166 | Ապակեամբարձիչի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 167 | Ազդանշանային համակարգի տեղադրում | հատ | 20250 |
| 168 | Մագնիտոլայի տեղադրում | հատ | 20250 |
| 169 | Վառոցքային լարերի հանում և տեղադրում | հատ | 1350 |
| 170 | Էլ/հաղորդալարերի հիմն. խուրձի հանում և տեղադրում | հատ | 81000 |
| 171 | Էլ/հաղորդալարերի երկրորդ խուրձի հանում և տեղադրում | հատ | 33750 |
| 172 | Էլեկտրական տվիչների փոխարինում | հատ | 2700 |
| 173 | Էլեկտրական անջատիչների փոխարինում | հատ | 2700 |
| 174 | Լապտերների կարգավորում | հատ | 4050 |
| 175 | Վառոցքի կոճի փոխարինում | հատ | 3000 |
| 176 | Վառոցքի մոմերի փոխարինում | հատ | 3000 |
| 177 | Կոնդիցիոների լիցքավորում | հատ | 22000 |
| 178 | Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում | հատ | 25000 |
| 179 | Թարթիչի միացման լծակի հանում և տեղադրում | հատ | 6750 |
| 180 | Մարտկոցի հանում և տեղադրում | հատ | 1350 |
| 181 | **11. Այլ ծառայություններ** | | |
| 182 | Անիվի հանում և տեղադրում | հատ | 1350 |
| 183 | Անվադողի քանդում և հավաքում | հատ | 1350 |
| 184 | Անիվի հավասարակշռում | հատ | 2050 |
| 185 | CO-զոդման աշխատանքներ | սմ | 1550 |

| | | | |
|---|---|---|---|
| 186 | Արգոնե-զոդման աշխատանքներ | սմ | 2025 |
| 187 | Խառատային աշխատանքներ | կտոր | 4050 |
| 188 | Փականագործի աշխատանքներ | ժամ | 10800 |

**Պարտադիր պայման**

Ընդհանուր սպասարկվելու է 12 ավտոմեքենա: Օգտագործվող պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված, գործարանային արտադրության և փաթեթավորված

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ քննչական կոմիտե**
**ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5**
**ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,**
**Հ/Հ 900011000834**
**ՀՎՀՀ 02631263**
**Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան**

(ստորագրություն)
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Կարկոմավտո» ՍՊԸ**
**ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 47**
**«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան » ՓԲԸ**
**Հ/Հ 217001094077001**
**ՀՎՀՀ 00059627**
**էլ. հասցե՝ naz@autogroup.am**
**հեռ. 010 380604**
**Տնօրեն՝ Կ. Գուլիանյան**

(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«11» 08 2023 թ. կնքված
ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ԱՎ-23/1 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2023 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 50111130/2 | ավտոմեքենաների վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ | - | - | - | - | - | - | - | 172 800 | 345 600 | 518 400 | 691 200 | 864 000 | **864 000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**ՀՀ քննչական կոմիտե**
**ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5**
**ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,**
**Հ/Հ 900011000834**
**ՀՎՀՀ 02631263**
**Գլխավոր քարտուղար՝ Կ. Մարգարյան**

(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

**«Կարկոմավտո» ՍՊԸ**
**ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 47**
**«Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան » ՓԲԸ**
**Հ/Հ 217001094077001**
**ՀՎՀՀ 00059627**
**էլ. հասցեն՝ uaz@autogroup.am**
**հեռ. 010 380604**
**Տնօրեն՝ Վ. Դոլգասյան**

(ստորագրություն)
Կ.Տ.

*Հավելված 3*
*« 11 » 08 2023 թ. կնքված*
***ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ԱՎ-23/1** ծածկագրով պայմանագրի*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*«  » «  » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ծառայությունը հանձնեց | Ծառայությունն ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«11» 08 2023 թ. կնքված*
***ՀՀ ՔԿ ՄԱԾՁԲ-ԱՎ-23/1** ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն